



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՆ
Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Մ Է
2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ**

Ակադեմիայում հեռակա ուսուցման ձևով ընդունվածները մագիստրոսի կրթական ծրագրով կրթություն կարող են ստանալ վճարովի հիմունքներով:

Մագիստրատուրայի ընդունելության քննության փաստաթղթերն ընդունվում են 2022 թվականի **սեպտեմբերի 12-ից մինչև հոկտեմբերի 21-ը ներառյալ:**

Հարցազրույցը կկազմակերպվի 2022 թվականի **հոկտեմբերի 25-28-ը:**

Ընդունելության մրցույթին կարող են մասնակցել առնվազն բակալավրի աստիճան ունեցող անձինք (մանրամասները տե՛ս ՀՀ պետական կառավարման ակադեմիայում մագիստրատուրայի ընդունելության կազմակերպման կարգի 27-30-րդ կետերում, հղումը՝ <https://paara.am/wp-content> :

h/h	Մասնագիտություններ և կրթական ծրագրեր	Տարեկան ուսման վճար (ՀՀ դրամ)	Հարցազրույց
1.	ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ Կրթական ծրագրերը՝		
1.1	Հանրային կառավարում	680 000	Ստուգվում են բանավոր խոսքի վարժ և համոզիչ լինելը, գրագիտությունը, բանավոր շարադրանքի տրամաբանական կառուցվածքը, փաստերի ճշգրտությունը:
1.2	Պետական կառավարում և տեղական ինքնակառավարում	680 000	
1.3	Հանրային ֆինանսների կառավարում	600 000	
2.	ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ Կրթական ծրագիրը՝		
2.1	Իրավագիտություն	780 000	
3.	ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ Կրթական ծրագրերը՝		
3.1	Քաղաքական կառավարում և քաղաքական վերլուծություն	550 000	
3.2	Գյուղայ կառավարում և տարածաշրջանային քաղաքականություն	550 000	
4.	ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ Կրթական ծրագիրը՝		
4.1	Կառավարման հոգեբանություն	550 000	

1.«Հանրային ֆինանսների կառավարում» կրթական ծրագրով ընդունելության մրցույթին կարող են մասնակցել տնտեսագիտություն, կառավարում կամ ճարտարագիտություն, ինչպես նաև բնական գիտությունների բնագավառի մասնագիտություններ ունեցող շրջանավարտները:

2.«Իրավագիտություն» կրթական ծրագրով ընդունելության մրցույթին կարող են մասնակցել «Իրավագիտություն» որակավորում ունեցող շրջանավարտները (բակալավր, դիպլոմավորված մասնագետ կամ մագիստրոս), ինչպես նաև այն դիմորդները, որոնց դիպլոմի (վկայագրի) հավելվածում (միջուկ) երկու կամ ավելի իրավագիտական առարկա է նշված:

Ուսման տևողությունը 2.5 տարի է:

Ակադեմիայի շրջանավարտներին շնորհվում է **կա՛մ կառավարման, կա՛մ իրավագիտության, կա՛մ քաղաքագիտության, կա՛մ հոգեբանության մագիստրոսի** որակավորման աստիճան:

Յուրաքանչյուր կրթական ծրագրով սովորողների նվազագույն թիվը 5-ն է (տե՛ս ՀՀ պետական կառավարման ակադեմիայում մագիստրատուրայի ընդունելության կազմակերպման կարգ, կետ 51):

Մրցույթին մասնակցելու համար Ակադեմիայի ռեկտորի անունով ներկայացվում է դիմում՝ կցելով համապատասխան փաստաթղթեր՝

1) բակալավրի, դիպլոմավորված մասնագետի, մագիստրոսի դիպլոմի և դրա հավելվածի (միջուկ) պատճենները (դեռևս դիպլոմ չստացած տվյալ տարվա շրջանավարտները՝ համապատասխան բուհի ռեկտորի ստորագրությամբ տեղեկանք բակալավրի շրջանավարտ լինելու մասին և ակադեմիական տեղեկանք՝ կնքված և ստորագրված, իսկ օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ «Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնից» տեղեկանք՝ դիպլոմի համարժեքության մասին),

2) ինքնակենսագրություն

3) 4 լուսանկար (3 x 4 սմ չափսի),

4) հրատարակված կամ հրատարակման ընդունված գիտական աշխատությունների ցուցակ (դրանց առկայության դեպքում),

5) անձը հաստատող փաստաթուղթ (Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար՝ անձնագիրը, նույնականացման քարտը, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթի կամ ժամանակավոր վկայականի պատճենը): Անձնագրի դեպքում ներկայացնել նաև սոցիալական քարտի պատճենը,

6) զինվորական գրքույկի (առկայության դեպքում) կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակն ու պատճենը,

7) մրցույթին մասնակցելու, ինչպես նաև փաստաթղթերն ընդունելու և ձևակերպելու համար սահմանված գումարը (5.000 ՀՀ դրամ) վճարելու վերաբերյալ անդորրագիրը,

8) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված արտոնություններից օգտվող (տե՛ս կցված՝ **Հավելված 1** և **Հավելված 2**) դիմորդները ներկայացնում են տվյալ արտոնություններից օգտվելու իրավունքը հավաստող փաստաթղթերի բնօրինակն ու պատճենը:

Դիմորդը սույն կետով սահմանված փաստաթղթերը բնօրինակների հետ միասին անձամբ ներկայացնում է փաստաթղթեր ընդունող հանձնաժողովին, որը փաստաթղթերի պատճենները համեմատում է բնօրինակների հետ: Բնօրինակները վերադարձվում են դիմորդին:

Վճարման կարգը՝

«ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն, Երևանի թիվ 1 ՏԳԲ

Հ/Հ 900018005646

ՀՎՀՀ 00035088

Նպատակի դաշտում նշել «**Ընդունելություն**» և **դիմորդի անունը, ազգանունը, հայրանունը:**

Համաձայն ՀՀ **պետական կառավարման ակադեմիայում մագիստրատուրայի ընդունելության կազմակերպման կարգի** 49-րդ կետի՝ մինչև հրամանագրելը «Ակադեմիան մրցույթը հաղթահարած դիմորդի հետ կնքում է պայմանագիր...»:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ընդունող հանձնաժողով
Մանրամասները տե՛ս՝ [Մագիստրատուրայի ընդունելության կարգ](#) :
(հասցեն՝ Երևան, Կիլյան 8, հեռախոս՝ 374 10 229737)
www.paara.am